

դնելու եւ մենք զմեզ ի բոլոր սրտէ նետելու Քրիստոսի հիմնած եկեղեցւոյ ճշմարիտ առաքելութեան մէջ, որուն համար Ան իր կեանքը տուաւ, եւ որուն վրայ Ան միշտ կ'ուզէ վառ պահել մեր ապրող հաւատքի ջահը: Եւ արդէն ժամանակն է, որ մէն մի քրիստոնեայ ապրի այսօրինակ հաւատք մը կեանքի ամէն ասպարէզներու մէջ: Ուշացում կը նշանակէ կորսնցնել վերջնական ու միակ առիթը ապրելու անոնցմով:

Ի՞նչ են պատճառները չյայտարարուած հաւատարմութեան: Ինչո՞ւ Արեւմաթացի աշակերտ էր՝ բայց ծածուկ, վախի պատճառով: Մենք միշտ կը դառնանք վախին՝ մարդուն հնազոյն ոսոխին, որովհետեւ մենք կը վախնանք պատասխանատուութենէ: Մարդիկ կան, որոնց համար աւելի հեշտ է եկեղեցի մտնել, աղօթել ու դուրս գալ: Ասոնց համար եկեղեցւոյ մը պատկանելիութիւնը, եւ կամ Ամերիկեան հասկացողութեամբ անդամակցութիւնը, ժամանակ եւ դրամ կ'ենթադրէ, եւ բնական է որ այդպէս ըլլայ: Երեւակայեցէք, ի՞նչ պիտի ըլլար եկեղեցւոյ վիճակը եթէ մենք բոլորս որոշէինք մնալ «գաղտնի, հեռուէն դիտող» աշակերտներ: Անտարակոյս մեծ կարիք կայ անհատներու՝ որոնք տրամադիր են իրենց վրայ առնել բեռը պատասխանատուութեան: Ոչ ոք իրաւունք ունի ըսելու. «Թող ուրիշներ ընեն գործը, եւ մենք մեզի իրաւունք տանք զնահատելու եւ կամ քննադատելու...»:

Համաձայն Անկլիքան Եկեղեցւոյ Լաւնդութեան, Արեւմաթացի ի վերջոյ կը բացայայտէ իր հաւատարմութիւնը Քրիստոսի եւ Անոր Եկեղեցւոյ: Ան գալով կը միանայ աշակերտներուն ու սեղանակից կ'ըլլայ անոնց, որուն ընթացքին անոնք ցոյց կու տան իրեն Վերջին Ընթրիքին գործածուած Բաժակը, զոր Արեւմաթացի կը խնդրէ որ իրեն տային իբր յիշատակ: Անոնք ալ ի նշան երախտագիտութեան, որ Յովսէփ իր գերեզմանը տրամադրած էր իրենց Վարդապետին, անոր կը յանձնեն Բաժակը: Աւանդութիւնը շարունակուելով կ'ըսէ թէ Արեւմաթացի տարիներ ետք Անգլիա կը հասնի, ու երբ կը մահանայ, իր հետ կը թաղեն Վերջին Ընթրիքի այդ սրբութիւնը, Կլասթընպէրի քլրան վրայ:

Ն. Ա. Մ.



Կլասթընպէրի

Մեր նախահայրերու համար դիւրին չէր պահել իրենց հաւատքը, անոնք գիտցան նուիրաբերել իրենց կեանքերը, ծառայութեան մէջ վառ պահելով բոցը հաւատքին՝ թխապահօծ եւ թշնամական աշխարհի մը մէջ: Անոնք իրենց կեանքով եւ շրթներով բացայայտեցին իրենց հաւատքն ու նուիրումը Անոր՝ որ զարնան նախամուտին, ուսերուն վրայ խաչ մը, բարձրացաւ Գողգոթա կոշտող բլուրը:



ԿԱՆՈՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՒՐԱԿԷՒՆ

Եկիր ի փրկութիւն Թագաւոր անմահ, եւ զմահ ճաշակեցեր փրկիչ աշխարհի, ողորմեայ:

Խաչի համբերեցեր Աստուած վասըն մարդկան, եւ թաղումըն յանձն առեր գերեքօրեայ, ողորմեա:

Եւ ի մեռելոց յարեար իշխանութեամբ որպէս որպէս տէր, զիս զմեղօք ըզմեռեալս նորոգեա եւ կեցո:

(Թարգմանութիւն)

Անմահ Թագաւոր, փրկելու եկար եւ մահը ճաշակեցիր. աշխարհի Փրկիչ, ողորմէ:

Աստուած, դուն որ մարդոց համար խաչին համբերեցիր, եւ երեքօրեայ թաղումըն յանձն առիր, ողորմէ:

Եւ որպէս Տէր՝ իշխանութեամբ մեռելներէն յարութիւն առիր. զիս մեղրով մեռածս նորոգէ եւ փրկէ: